Հաստատված է

ԳՊՀ գիտական խորհրդի 2024թ.

մայիսի 31-ի թիվ 13 նիստի որոշմամբ

Ռեկտոր՝ Ռ. Խ. Հակոբյան

«31» մայիս 2024թ.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ,ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳ

(փոփոխություններով)

ԳԱՎԱՌ – 2024

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Գավառի պետական համալսարանում /այսուհետ՝ ԳՊՀ/ բակալավրի ավարտական աշխատանքը /այսուհետ՝ Աշխատանք/ ինքնուրույն, տեսական կամ կիրառական նշանակություն ունեցող հետազոտական աշխատանք է, որն արտացոլում է ուսանողի՝ տվյալ մասնագիտության շրջանակներում ձեռք բերած գիտելիքները կիրառելու և մասնագիտական ոլորտին առնչվող խնդիրներ ձևակերպելու, հետազոտական մեթոդներ կիրառելու և լուծումներ առաջարկելու հմտությունները:

1.2. Մագիստրոսական թեզը /այսուհետ՝ Թեզ/ ինքնուրույն հետազոտական, վերլուծական և/կամ կիրառական նշանակություն ունեցող ավարտուն աշխատանք է, որն արտացոլում է ուսանողի՝ տվյալ մասնագիտական ոլորտում ձեռք բերած գիտելիքները կիրառելու և ինքնուրույն ուսումնասիրություն կատարելու կարողությունները, ինչպես նաև գիտական խնդիրներ ձևակերպելու և նոր լուծումներ առաջարկելու հմտությունները:

1.3. Աշխատանքի կատարումը և հրապարակային պաշտպանությունը բակալավրիատի կրթական ծրագրերի ավարտական պահանջներից են:

1.4. Թեզի կատարումը և հրապարակային պաշտպանությունը մագիստրատուրայի կրթական ծրագրերի ավարտական պահանջներից են:

1.5. Աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունն առկա բաժիններում իրականացվում են 5-րդից 8-րդ կիսամյակներում, իսկ հեռակա բաժիններում՝ 7-րդից 10-րդ կիսամյակներում: Բոլոր ուսանողները մինչև 5-րդ (հեռակա բաժիններում՝ 7-րդ) կիսամյակի ավարտը պետք է ունենան Աշխատանքի հաստատված թեմաներ և ղեկավարներ: Աշխատանքի պատրաստման և պաշտպանության համար բակալավրի կրթական ծրագրում նախատեսվում է 8 կրեդիտ աշխատածավալ:

1.6. Թեզի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են 2-4-րդ կիսամյակներում: Բոլոր ուսանողները մինչև 1-ին կիսամյակի ավարտը պետք է ունենան թեզերի հաստատված թեմաներ և ղեկավարներ: Թեզի պատրաստման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 12 կրեդիտ աշխատածավալ:

2. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԹԵԶԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

2.1. Աշխատանքի տիտղոսաթերթը լրացվում է՝ համաձայն Հավելված 1-ում ներկայացված ձևաչափի, իսկ Թեզի տիտղոսաթերթինը՝ ըստ Հավելված 2-ի:

2.3. Աշխատանքի և Թեզի տիտղոսաթերթերին ստորագրում են ուսանողը, ղեկավարը և ամբիոնի վարիչը:

2.3. Բովանդակության մեջ ըստ հերթականության ներկայացվում են Աշխատանքի, Թեզի բոլոր բաժինները, դրանց համապատասխան էջերը, ինչպես նաև հավելվածները (առկայության դեպքում), որոնք կցվում են Աշխատանքին, Թեզին:
2.4. Ներածության մեջ ներկայացվում են Աշխատանքի, Թեզի արդիականությունը, նպատակն ու խնդիրները, ուսումնասիրության առարկան և մեթոդները, տեսական և/կամ կիրառական նշանակությունը, կառուցվածքն ու ծավալը:
2.5. Աշխատանքի հիմնական մասը բաղկացած է գլուխներից և ենթագլուխներից: Այն բովանդակում է օգտագործված գրականության և ուսումնասիրվող հիմնախնդրի վերլուծությունը, կատարված հետազոտության նկարագրությունը, ուսումնասիրության արդյունքների շարադրումը, վերլուծությունը և ամփոփումը:
2.6. Եզրակացությունները, առաջարկությունները ներկայացվում են առանձին մասում՝ ամփոփիչ հատվածում, որտեղ ներկայացվում են Աշխատանքի, Թեզի արդյունքները:
2.7. Օգտագործված գրականության ցանկում նշվում են միայն այն աղբյուրները, ակտերը, գրականությունը, որոնք օգտագործվել են Աշխատանքը, Թեզը շարադրելիս, և որոնց համապատասխան հղումներ են արված հիմնական մասում:
2.8. Առկայության դեպքում հավելվածները կցվում են Աշխատանքին, Թեզին:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԹԵԶԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Աշխատանքը և Թեզը պաշտպանության են ներկայացվում համակարգչային շարվածքով՝ տպագիր, կազմված և էլեկտրոնային տարբերակներով: Թղթի չափսը՝ A4 (210 մմ x 297 մմ), լուսանցքները՝ ձախից 3.0 սմ, աջից՝ 1.5 սմ, վերևից՝ 2.0 սմ և ներքևից՝ 2.5 սմ: Նյութը տպվում է թերթի միայն մեկ երեսին: Տեքստի էլեկտրոնային շարվածքը կատարվում է «Յունիկոդ» (Unicode) կոդավորման համակարգի տառատեսակների կիրառմամբ, անգլերեն և ռուսերեն տեքստերի համար «Times New Roman», իսկ հայերենի դեպքում՝ «GHEA Grapalat» տառատեսակներով: Վերնագրերը շարվում են 14 pt տառաչափով, իսկ տեքստը՝ 12 pt, միջտողային հեռավորությունը՝ 1.5: Գլուխների վերնագրերը գրվում են թավ (bold) և գլխատառերով: Յուրաքանչյուր գլուխ սկսվում է նոր էջից: Պարբերությունները հավասարեցվում են երկու կողմերից, սկսվում են 1 սմ խորքից: Աշխատանքի բոլոր էջերը համարակալվում են ներքևում՝ կենտրոնում: Համարակալումը սկսվում է բովանդակությունից, որը համարվում է 2-րդ էջ: Աշխատանքի, Թեզի հավելվածները համարակալվում են նորից՝ սկսած առաջին էջից:
3.2. Աշխատանքում, Թեզում առկա աղյուսակները, նկարներն ու գծապատկերները և այլն համարակալվում են, և դրանց տրվում են անվանումներ (անհրաժեշտության դեպքում տրվում են նաև ծանոթագրություններ): Նկարների, գծապատկերների, գծագրերի անվանումները, նշանակումների բացատրությունները գրվում են դրանց ներքևում, մեջտեղում՝ 10 pt տառաչափով: Աղյուսակների անվանումները գրվում են դրանց վերևում, իսկ հավելվածներինը՝ նոր էջի վերին աջ անկյունում:

3.3. Աշխատանքի, Թեզի վերջում տրվում է օգտագործված գրականության ցանկը, որը ներկայացվում է բնագրի լեզվով: Նախ նշվում են հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը և անվան սկզբնատառ(եր)ը, այնուհետև նյութի՝ գրքի կամ հոդվածի ամբողջական անվանումը, ամսագրի լրիվ կամ ընդունված կրճատ անվանումը, հրատարակման վայրը, հրատարակչությունը, հրատարակման թվականը, հատորի և թողարկման համարները, հերթական համարը, էջերը կամ գրքի էջերի քանակը:

3.4. Համացանցում տեղադրված նյութերի դեպքում կիրառվում են նույն սկզբունքները՝ վերջում նշելով համապատասխան նյութի հղման հասցեն և ծանոթանալու ամսաթիվը (օրինակ, //http://www.arlis.am..., 15.02.2019):

3.5. Հղումները տեքստում տրվում են ուղղանկյուն փակագծերում՝ ըստ գրականության ցանկում ներկայացված կարգային համարի ([7], [3-8], [3, 7, 9-11], [3, էջ 215] կամ նշելով հեղինակի ազգանունը և հրատարակման տարեթիվը, կամ տողատակում, ինչպես ներկայացվում է օրինակում[1]:

3.6. Աշխատանքի նվազագույն ծավալը պետք է կազմի 40 էջ, իսկ Թեզի նվազագույն ծավալը՝ 50 էջ:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԹԵԶԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

4.1. Աշխատանքի, Թեզի պատրաստումը և պաշտպանությունն իրականացվում են ԳՊՀ առկա և հեռակա բաժինների համար սահմանված ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույցի համաձայն (Հավելված 5, Հավելված 6):

4.2. Աշխատանքի, Թեզի պատրաստման աշխատանքները կատարվում են ղեկավարի խորհրդատվությամբ և վերահսկողությամբ:

Ղեկավարի պարտականություններն են.

ա) Աշխատանքի, Թեզի կառուցվածքի կազմում, հիմնախնդրի ձևակերպում,

բ) Աշխատանքի, Թեզի կատարման աշխատանքային պլանի /Հավելված 3, Հավելված 4, Հավելված 5/, ժամանակացույցի /Հավելված 6, Հավելված 7/ կազմում և դրա իրականացման վերահսկողություն,

գ) թեմայի վերաբերյալ գրականության և այլ աղբյուրների ընտրություն,

դ) խորհրդատվություն ուսանողին՝ Աշխատանքի, Թեզի կատարմանն առնչվող հարցերում՝ համաձայն խորհրդատվությունների համար դեկանատի կողմից սահմանված կիսամյակային ժամանակացույցի,

ե) ծանուցում ուսանողին՝ սույն կարգի դրույթների, պահանջների և գնահատման չափանիշների ու չափորոշիչների վերաբերյալ,

[1] Խաչատրյան Գ. Ս., Աղաջանով Ի. Մ. Կենսաքիմիա // (Դասագիրք բժշկական և կենսաբանական բուհերի ուսանողների, կենսաքիմիկոսների և բժիշկների համար), Երևան, 2001, 679 էջ:

զ) խորհրդատվություն (օգնություն) ուսանողին՝ ելույթի պատրաստման և պաշտպանության համար անհրաժեշտ ցուցադրական նյութերի ընտրության, շնորհանդեսի պատրաստման հարցում,

է) Աշխատանքի, Թեզի վերաբերյալ ղեկավարի գրավոր կարծիքի կազմում:

4.3. Ղեկավարի կարծիքում արտացոլվում են.

ա) Աշխատանքի, Թեզի թեմայի արդիականությունը, գիտատեսական, գործնական նշանակությունը,

բ) ուսանողի՝ ինքնուրույն աշխատելու, տվյալներ մշակելու, հետազոտություն կատարելու և եզրակացություններ անելու կարողությունը,

գ) Աշխատանքի, Թեզի պաշտպանությանը ներկայացվող դրույթների վերաբերյալ կարծիքը,

դ) Աշխատանքի, Թեզի ձևավորման համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,

ե) Աշխատանքի, Թեզի երաշխավորում հրապարակային պաշտպանության կամ մերժում:

4.4 Աշխատանքի, Թեզի նախապաշտպանությունն իրականացվում է համապատասխան ամբիոնում, բակալավրի կրթական ծրագրի ղեկավարների, ինչպես նաև ուսանողի Աշխատանքի, Թեզի ղեկավարի մասնակցությամբ:

4.5 Աշխատանքում, Թեզում գրագողության հայտնաբերման կամ ինքնուրույնության աստիճանի 50 %-ից ցածր լինելու դեպքում կազմվում է համապատասխան արձանագրություն, որի հիման վրա Աշխատանքը, Թեզը չի երաշխավորվում պաշտպանության:

4.6 Պաշտպանության են ներկայացվում նախապաշտպանությունը հաջողությամբ անցած և դրական գրախոսությամբ Աշխատանքներն ու Թեզերը:

4.7 Պաշտպանության թույլատրված Աշխատանքի և Թեզի տիտղոսաթերթին նշվում է «Թույլատրվում է պաշտպանության» գրառումը՝ հաստատված ամբիոնի վարիչի ստորագրությամբ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԹԵԶԻ ԳՐԱԽՈՍՈՒՄՆ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

5.1. Աշխատանքը, Թեզը ավարտելուց հետո ուսանողը ստորագրում է տիտղոսաթերթին և ներկայացնում ղեկավարին, ով, ծանոթանալով Աշխատանքին, Թեզին և երաշխավորելով (կամ մերժելով) այն՝ համապատասխան կարծիքով ներկայացնում է ամբիոն:

5.2. Աշխատանքը, Թեզը քննարկվում է ամբիոնի նիստում՝ այն կատարած ուսանողի մասնակցությամբ, երաշխավորվում է (կամ չի երաշխավորվում) պաշտպանության: Ամբիոնի վարիչի կողմից երաշխավորված Աշխատանքը, Թեզը ուղարկվում է գրախոսության:

5.3. Աշխատանքի, Թեզի գրախոսը ամբիոնի վարիչի և ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ հաստատվում է ԳՊՀ ռեկտորի կողմից:

5.4. Գրախոսները երկշաբաթյա ժամկետում ծանոթանում են Աշխատանքում, Թեզում զետեղված բոլոր նյութերի հետ, պատրաստում գրախոսական և այն ներկայացնում են համապատասխան ամբիոն:

Գրախոսականում պետք է արտացոլված լինեն.

1) Աշխատանքի, Թեզի թեմայի արդիականությունը, գիտատեսական, գործնական նշանակությունը,
2) Աշխատանքի, Թեզի ընդհանուր բնութագիրը, բովանդակության համապատասխանությունը թեմային,
3) կատարված հետազոտությունների բովանդակության ամբողջականությունը, հետազոտության արդյունքները, արված եզրակացությունները,
4) Աշխատանքի, Թեզի դրական և բացասական կողմերը,
5) Աշխատանքի, Թեզի առաջարկվող գնահատականը:

5.5. Մինչ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովին Աշխատանքը, Թեզը պաշտպանության ներկայացնելը, ուսանողը պետք է ծանոթանա գրախոսականի (գրախոսականների) բովանդակության հետ:

5.6.Ուսանողի կողմից Աշխատանքի, Թեզի ներկայացումը մասնագիտական ամբիոն և դրանց գրախոսումը կատարվում են՝ ըստ սույն կարգում սահմանված ժամանակացույցի (Հավելված 6, Հավելված 7):

5.7. Աշխատանքը կարող է գրախոսվել նաև բուհի այլ ամբիոնի կամ մեկ այլ հաստատության մասնագետի կողմից, զուգադրական թեմաների դեպքում՝ երկու մասնագետի կողմից, իսկ Թեզը՝ միայն արտաքին գրախոսի կողմից:

5.8. Աշխատանքը, Թեզը պաշտպանությունից հետո պահվում է ԳՊՀ արխիվում 5 տարի, այնուհետև սահմանված կարգով մարվում է: Լավագույն Աշխատանքները, Թեզերը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի որոշմամբ հանձնվում են ԳՊՀ գրադարան:

5.9 Հրապարակային պաշտպանության ժամանակ գրագողության հայտնաբերման դեպքում Աշխատանքը, Թեզը գնահատվում են «անբավարար»:

5.10 Աշխատանքի, Թեզի հրապարակային պաշտպանությունը իրականացվում է՝ համաձայն ՀՀ ԿԳ նախարարի հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»-ի և «ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգ»-ի պահանջների:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ, ԹԵԶԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

6.1. Աշխատանքի, Թեզի պաշտպանության արդյունքները գնահատվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների քվեարկությամբ, 100 միավորանոց սանդղակով:

6.2. Աշխատանքի, Թեզի արդյունքները գնահատվում են «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար»՝ ԳՊՀ-ի կողմից հաստատված գնահատման սանդղակին համապատասխան:

6.3. Աշխատանքը, Թեզը գնահատում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի միայն այն անդամները, ովքեր ներկա են եղել տվյալ ուսանողի պաշտպանության ամբողջ

ընթացքում:

6.4. Ուսանողի արդյունարար միավորը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի անդամների նշանակած արդյունարար միավորների միջինն է:

6.5. Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի գնահատման արդյունքները հրապարակվում են ամփոփումից անմիջապես հետո՝ ուսանողների ներկայությամբ:

6.6. «Անբավարար» գնահատական ստացած կամ պաշտպանությանը չմասնակցած անձանց սահմանված կարգով թույլատրվում է նախապատրաստել և պաշտպանել նոր Աշխատանք, Թեզ հաջորդ տարում կամ հետագա տարիներին:

7. ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

7.1. Գնահատման արդյունքների հրապարակումից հետո՝ հանձնաժողովի նախագահը ներկա ուսանողներին հարցնում է բողոքների առկայության մասին:

7.2. Ուսանողը գնահատման արդյունքների հրապարակումից անմիջապես հետո՝ դրանց վերաբերյալ բողոքի առկայության դեպքում դիմում է ներկայացնում հանձնաժողովի նախագահին:

7.3. Բողոքարկումն իրականացվում է, եթե առկա են «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման», «ԳՊՀ շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգերի ընթացակարգային դրույթների խախտումներ:

7.4. Հանձնաժողովի նախագահը դիմումը ստանալուց անմիջապես հետո շրջանավարտին է ներկայացնում հանձնաժողովի անդամների գնահատումների արդյունքները՝ համաձայն սահմանված չափանիշների և չափորոշիչների:

7.5. Գնահատման գործընթացում ընթացակարգերի գործարկման և գնահատման միավորների հաշվարկման ու ամփոփման սխալների հայտնաբերման դեպքում՝ հանձնաժողովը.

ա) փոխում է ուսանողի գնահատականը, եթե հայտնաբերված խախտումը կամ սխալն ազդել են գնահատման արդյունքի վրա,

բ) չի փոխում գնահատականը, եթե սխալը կամ թերությունը չեն ազդել գնահատման արդյունքի վրա:

ՀԱՎԵԼՎԱԾ 1.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ [20 pt, Bold]

——————————— **ՖԱԿՈՒԼՏԵՏ**[14pt, Bold]
——————————— **(ԱՄԲԻՈՆ)** [14 pt, Bold]
——————————— **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ**[12pt, Bold]
——————————— **ԿՐԹԱԿԱՆԾՐԱԳԻՐ**[12pt, Bold]
——————————— **ԲԱԺԻՆ**[12pt, Bold]

<u>ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ</u> [22 pt, Bold]

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ [16 pt, Bold]

«_____» ***մասնագիտությամբ***

_____***բակալավրիորակավորման աստիճանի հայցման համար***[13 pt, Bold, Italic]

Ուսանող՝ _____[12 pt, Bold, Italic]
(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Ղեկավար՝_____[12 pt, Bold, Italic]
(ստորագրություն) (ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում)

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____[12 pt, Bold, Italic]
(ստորագրություն) (ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում)

«_____»_____202__թ.

ԳԱՎԱՌ 202_ [11 pt, Bold]

ՀԱՎԵԼՎԱԾ 2.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ [20 pt, Bold]

ՖԱԿՈՒԼՏԵՏ[14 pt, Bold]
(ԱՄԲԻՈՆ) [14 pt, Bold]
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ[12 pt, Bold]
ԿՐԹԱԿԱՆԾՐԱԳԻՐ[12 pt, Bold]

<u>ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶ</u> [22 pt, Bold]

ԹԵՄԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ [16 pt, Bold]

«_____» ***մասնագիտությամբ***

_____***մագիստրոսի որակավորման աստիճանի հայցման համար***[13 pt, Bold, Italic]

Ուսանող՝ _____[12 pt, Bold, Italic]
(ստորագրություն) (ազգանուն, անուն, հայրանուն)

Ղեկավար՝_____[12 pt, Bold, Italic]
(ստորագրություն) (ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում)

«Թույլատրել պաշտպանության»

Ամբիոնի վարիչ՝ _____[12 pt, Bold, Italic]
(ստորագրություն) (ազգանուն, անուն, գիտական աստիճան, կոչում)

«_____»_____202__թ.

ԳԱՎԱՌ 202_ [11 pt, Bold]

ՀԱՎԵԼՎԱԾ 3.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԱՌԿԱ ԲԱԺՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

1. Ֆակուլտետը _____
2. Մասնագիտությունը _____
3. Կրթական ծրագիրը _____
4. Ազգանունը, անունը, հայրանունը _____
5. Ընդունման տարեթիվը_____
6. Ավարտական աշխատանքի թեման_____
7. Ավարտական աշխատանքի ղեկավարը _____
8. Ավարտական աշխատանքի թեման հաստատվել է ԳՊՀ _____

ամբիոնի թիվ —— նիստում

Ավարտական աշխատանքի նկարագիրը՝ ըստ կիսամյակների և կատարման վերջնաժամկետների

5-րդ
կիսամյակ՝_____

_____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------
Ուսանող՝ ----------

6-րդ կիսամյակ՝ _____

_____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------
Ուսանող՝ ----------

7-րդ կիսամյակ՝_____

_____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------
Ուսանող՝ ----------

8-րդ կիսամյակ՝ _____

_____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------

Ուսանող՝ ----------

/Յուրաքանչյուր կիսամյակի համար ավարտական աշխատանքի կատարման աշխատանքային պլանը ստորագրվում է ղեկավարի և ուսանողի կողմից, 8-րդ կիսամյակում ամրագրվում է նաև Աշխատանքի ինքնուրույնության աստիճանը՝ ստուգված հակագրագողության ծրագրով/:

ՀԱՎԵԼՎԱԾ 4.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ՀԵՌԱԿԱ ԲԱԺՆՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

1. Ֆակուլտետը _____

2. Մասնագիտությունը _____

3. Կրթական ծրագիրը _____

4. Ազգանունը, անունը, հայրանունը _____

5. Ընդունման տարեթիվը_____

6. Ավարտական աշխատանքի թեման_____

_____

7. Ավարտական աշխատանքի ղեկավարը _____

8. Ավարտական աշխատանքի թեման հաստատվել է ԳՊՀ _____

ամբիոնի թիվ ——— նիստում

Ավարտական աշխատանքի նկարագիրը՝ ըստ կիսամյակների և կատարման վերջնաժամկետների

7-րդ կիսամյակ՝_____

_____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------

Ուսանող՝ ----------

8-րդ կիսամյակ՝ _____

_____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------

Ուսանող՝ ----------

9-րդ
կիսամյակ՝_____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------
Ուսանող՝ ----------

10-րդ կիսամյակ՝ _____

Ավարտական աշխատանքի ղեկավար՝ ----------
Ուսանող՝ ----------

/Յուրաքանչյուր կիսամյակի համար ավարտական աշխատանքի կատարման աշխատանքային պլանը ստորագրվում է ղեկավարի և ուսանողի կողմից, 10-րդ կիսամյակում ամրագրվում է նաև Աշխատանքի ինքնուրույնության աստիճանը՝ ստուգված հակագրագողության ծրագրով/:

ՀԱՎԵԼՎԱԾ 5.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՍՈՎՈՐՈՂԻ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

1. Ֆակուլտետը _____
2. Մասնագիտությունը _____
3. Կրթական ծրագիրը _____
4. Ազգանունը, անունը, հայրանունը _____
5. Ընդունման տարեթիվը՝ _____
6. Մագիստրոսական թեզի թեման _____

_____

7. Մագիստրոսական թեզի ղեկավարը _____
8. Մագիստրոսական թեզի թեման հաստատվել է ԳՊՀ _____

ամբիոնի թիվ ——— նիստում

Մագիստրոսի աշխատանքի նկարագիրը՝ ըստ կիսամյակների և ըստ վերջնաժամկետի

I կիսամյակ՝_____

_____

Մագիստրոսական թեզի ղեկավար՝ ----------

Ուսանող՝ ----------

II կիսամյակ՝ _____

_____

Մագիստրոսական թեզի ղեկավար՝ ----------

Ուսանող՝ ----------

III կիսամյակ՝ _____

_____

Մագիստրոսական թեզի ղեկավար՝ ----------

Ուսանող՝ ----------

IV կիսամյակ՝————————————

ՀԱՎԵԼՎԱԾ 6.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻԱՏԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԳՊՀ բակալավրիատի առկա բաժնում /այսուհետ՝ ԱԲ/ և հեռակա բաժնում /այսուհետ՝ ՀԲ/ ավարտական աշխատանքի /այսուհետ՝ Աշխատանք/ կատարման ժամկետները՝ ըստ կիսամյակների և ամիսների.

I. Բակալավրիատի ուսումնառության 5-րդ կիսամյակ /ԱԲ/ և 7-րդ կիսամյակ /ՀԲ/

1. Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների կողմից Աշխատանքների թեմաների ներկայացում՝ մինչև ընթացիկ ուստարվա հոկտեմբերի 1-ը,
2. Ուսանողի կողմից Աշխատանքի թեմայի ընտրություն և ամբիոնի կողմից ղեկավարի հաստատում՝ մինչև ընթացիկ ուստարվա նոյեմբերի 1-ը,
3. Ղեկավարի աջակցությամբ Աշխատանքի թեմայի կառուցվածքի մշակում, ուսանողին մասնագիտական գրականության, համապատասխան աղբյուրների նախնական ցանկի տրամադրում՝ մինչև ընթացիկ ուստարվա դեկտեմբերի 1-ը:

II. Բակալավրիատի ուսումնառության 6-րդ կիսամյակ/ԱԲ/ և 8-րդ կիսամյակ /ՀԲ/

1. Մասնագիտական գրականության, համապատասխան աղբյուրների ուսումնասիրում, Աշխատանքի թեմայի արդիականության, նպատակի, խնդիրների, մեթոդաբանության, վարկածի ձևակերպում /առկայության դեպքում/, Աշխատանքի տեսական մասի ուսումնասիրում և մշակում մինչև ընթացիկ ուստարվա հունիսի 1-ը,

III. Բակալավրիատի ուսումնառության 7-րդ կիսամյակ/ԱԲ/ և 9-րդ կիսամյակ /ՀԲ/

1. Աշխատանքի նախնական տարբերակի տեսական մասի ներկայացում ամբիոն՝ մինչև ընթացիկ ուստարվա հոկտեմբերի 1-ը,
2. Աշխատանքի հետազոտական մասի իրականացում, գլխի/գլուխների ամբողջական տարբերակի ներկայացում՝ մինչև ընթացիկ ուստարվա դեկտեմբերի 1-ը,
3. Ղեկավարի կողմից Աշխատանքի ստուգում, կարծիքի ներկայացում, իսկ բովանդակային և տեխնիկական թերությունների առկայության դեպքում Աշխատանքի լրամշակում և ներկայացում ամբիոն՝ մինչև նոր տարվա հունվարի մեկը:

IV. Բակալավրիատի ուսումնառության 8-րդ կիսամյակ /ԱԲ/ և 10-րդ կիսամյակ /ՀԲ/

1. Ամբիոնի կողմից Աշխատանքի նախապաշտպանության երաշխավորում՝ մինչև ընթացիկ ուստարվա փետրվարի 1-ը,
2. Աշխատանքի նախնական պաշտպանություն՝ ընթացիկ ուստարվա փետրվար ամիս,
3. Աշխատանքի վերջնական տարբերակի ներկայացում՝ մինչև ընթացիկ ուստարվա մարտի 1-ը,
4. Աշխատանքի ներկայացում ներքին կամ արտաքին գրախոսության՝ մինչև ընթացիկ ուստարվա ապրիլի 1-ը,
5. Աշխատանքի գրախոսում և նախապաշտպանություն՝ ընթացիկ ուստարվա ապրիլ ամսին,
6. Աշխատանքի պաշտպանություն՝ ընթացիկ ուստարվա մայիս ամսին:

ՀԱՎԵԼՎԱԾ 7.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Մագիստրոսական թեզի /այսուհետ՝ Թեզ/ կատարման ժամկետները՝ ըստ կիսամյակների և ամիսների.

I. Մագիստրատուրայի ուսումնառության 1-ին կիսամյակ

1. Ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների կողմից Թեզերի թեմաների ներկայացում՝ մինչև ընթացիկ ուստարվա հոկտեմբերի 1-ը,
2. Ուսանողի կողմից Թեզի թեմայի ընտրություն և ամբիոնի կողմից ղեկավարի հաստատում՝ մինչև ընթացիկ ուստարվա նոյեմբերի 1-ը,
3. Ղեկավարի աջակցությամբ Թեզի թեմայի կառուցվածքի մշակում, ուսանողին մասնագիտական գրականության և համապատասխան աղբյուրների նախնական ցանկի տրամադրում՝ մինչև ընթացիկ ուստարվա դեկտեմբերի 1-ը:

II. Մագիստրատուրայի ուսումնառության 2-րդ կիսամյակ

1. Մասնագիտական գրականության, համապատասխան աղբյուրների ուսումնասիրում, Թեզի թեմայի արդիականության, նպատակի, խնդիրների, մեթոդաբանության, վարկածի ձևակերպում /առկայության դեպքում/, Թեզի տեսական մասի ուսումնասիրում և մշակում մինչև ընթացիկ ուստարվա հունիսի 1-ը,

III. Մագիստրատուրայի ուսումնառության 3-րդ կիսամյակ

1. Թեզի նախնական տարբերակի տեսական մասի ներկայացում ամբիոն՝ մինչև ընթացիկ ուստարվա հոկտեմբերի 1-ը,
2. Թեզի հետազոտական մասի իրականացում և գլխի/գլուխների ամբողջական տարբերակի ներկայացում՝ մինչև ընթացիկ ուստարվա դեկտեմբերի 1-ը,

3. Ղեկավարի կողմից Թեզի ստուգում, կարծիքի ներկայացում, իսկ բովանդակային և տեխնիկական թերությունների առկայության դեպքում Թեզի լրամշակում և ներկայացում ամբիոն՝ մինչև նոր տարվա հունվարի 1-ը:
4. Թեզի ամբողջական տարբերակի ներկայացում՝ հունվար ամսվա 2-րդ շաբաթին:

IV. Մագիստրատուրայի ուսումնառության 4-րդ կիսամյակ

1. Ամբիոնի կողմից Թեզի նախապաշտպանության երաշխավորում՝ մինչև ընթացիկ ուստարվա փետրվարի 1-ը,
2. Թեզի նախնական պաշտպանություն՝ ընթացիկ ուստարվա փետրվար ամսին,
3. Թեզի վերջնական տարբերակի ներկայացում՝ մինչև ընթացիկ ուստարվա մարտի 1-ը,
4. Թեզի ներկայացում արտաքին գրախոսության՝ մինչև ընթացիկ ուստարվա ապրիլի 1-ը,
5. Թեզի գրախոսում և նախապաշտպանություն՝ ընթացիկ ուստարվա ապրիլ ամսին,
6. Թեզի պաշտպանություն՝ ընթացիկ ուստարվա մայիս ամսին: